ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, 1895 · ԹԻՒ 18 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 105

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀՈԳԻՈՅՆ ՆԱՀԱՏԱԿԵԼՈՅ Ի ՍԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ի Կ. ՊՈԼԻՍ. Ի ՏՐԱՊԻԶՈՆ, Ի ՎԱՆ, Ի ՍԵԲԱՍՏԻԱ, Ի ՄՈՒՇ

ԵՒ ՅԱՅԼ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՒԱՌՍ

Յամսեանն Հոկտեմբերի 1895

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տոլեր կամ տասն Ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի Ցիշատակ Հոգւոցն Նահատակելոց ի սէր Հայրենեաց.— Խմբագրական Նշմարք. — Կ.Պոլսոյ Հայկական Ցոյցին Բացատրութիւնն Նիւ Եորքի Թերթերուն մէջ հրատարակուած՝ Հ. Հ. Դաշնակցութեան կողմանէ.— Ո՞վ են Հայոց Բարեկամք.— Նամակ Կ. Պոլսէ.-- Զափազանցութիւն չկայ.— Համգամակութիւն Սասնոյ սովելոց համար.— Նոր Նիզակակից մի Հայաստանի.— Բացուած է բաժանորդագրութիւնն ՀԱՅՔի 1896 թուականին.— Հեռագրական լուրեր Կ.Պոլսոյ ժխորմանն մասին.— Այլ և այլք.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

ՀԱՅՈՒԹԻՒՆՆ, որ դեռ կ'ողբար իւր Սասնոյ որդւոց ջարդն, այժմ ի խորագոյն սուգ կ'ընկղմի համատարած կոտորածին առթիւ որոյ զոհ եղան հազարաւոր Հայեր ի Կ. Պոլիս և ի գաւառս:

Ճգնաժամն իւր վերջին օրերուն հասած է, և շուտով պիտի վճռուի Հայաստանի բաղդն— փրկութիւն կամ մահ:

***

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ այս անգամ աւելի որոշ կերպով մխուեցաւ ի գործ, և ցոյց տուաւ Եւրոպիոյ և Թուրքիոյ թէ պարտին զինքն ևս ի հաշիւ առնուլ իբրև կարեւոր գործօն:

***

Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ այս ճգնաժամու մէջ ի հանդէս կուգայ իբրեւ խորհրդեանց և բանիբուն առաջնորդ, և ազգային երախտագիտութեան նոր տիտղոս մի կը շահի: Այս տարի երբ ազգային Նաւըն աճաւոր ալեկոծութեան բռնուած է, ոչ ինչ այնքան մխիթարական է որքան մտածել թէ կայ հեռատես և քաջ նաւուղիղ մի ի գլուխ ղեկին:

***

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՔ ամեն ուրեք խորապէս յուզուած՝ կը բազմապատկեն ջանքերն ի փրկութիւն վտանգեալ Հայրենիքին: Բարիզի մէջ, նախագահութեամբ Տիար Ց. Իսկէնտէրի, ժողով մ'է եղած, հանգանակութիւն կատարուած և միջոցներ ձեռք առնուած ի մօտակայս համաշխարհային ժողով մ'անելու Փրանսական մայրաքաղաքին մէջ:

***

ԲՈՒՆ ԽՆԴԻՐՆ. Անգլիա կը յայտարարէ թէ Դուռն չէ կարող կառավարել զՀայաստան: Ցայտ ամբողջ Եւրոպա համաձայն է Անգլիոյ:

Անգլիա կը պահանջէ որ եւրոպական Տէրութեանց ներկայացուցիչներ հսկեն Հայաստանի բարեկարգութեան գործոյն և վարչութեան: Դոքա պիտի լինին միայուն Մասնաժողով, և պիտի նստին ի Կ. Պոլիս, ի Բ. Դուռն, օսմանցի անդամներու հետ: Այս կը նշանակէ թողուլ որ Սուլթանն թագաւորէ այսուհետեւ սակայն ոչ ևս կառավարէ: Ի մի բան՝ այսպիսի մասնաժողովոյ մի հաստատութիւնն կը լինի զամբողջ Օսմանեան կայսրութիւնն Եգիպտոսի համար եղած տնօրինութեան նման տնօրինութեան մի ենթարկել, կամ այն ճամբուն մէջ դնել:

Սուլթանն բոլոր ուժովն կ'ընդդիմանայ այս առաջարկին:

Ռուսիա և Ֆռանսա կասկածով և թուլութեամբ կը վարուին, երկնչելով թէ մի գուցէ Անգլիա, շնորհիւ իւր Նաւային վիթխարի ուժին, գերակշիռ ձեռնկատարըն լինի ի Կ. Պոլիս:

***

Պոսթոնի մէջ ևս Հայ սովեալներու օգնելու նպատակաւ Ամերիկեան Մասնախումբ մի կազմուած է:

Հետաքրքիր եմք գիտնալ թէ Պոլսեան վերջին դէպքերն ի՞նչ կերպով պատմեցին Թուրք լրագիրք։

***

Մեք նորէն կը պնդեմք թէ գաւառներու Հայերն միայն պաշտպանողական դիրք պէտք է բռնեն, և Նախայարձակ լինելով տեղի չտան ձրի կոտորածներու։ «Աւազակային» կոչուած գաւառական խմբերու օգտակարութիւնն յոյժ երկբայելի է։

***

ԼՐԱԳԻՐՔ, Ամերիկայի մէջ և յԱնգլիա ևս, Պոլսեան ցոյցին առաջին տպաւորութեան տակ թուլութեան նշաններ տըւին, և կարող չեղան իսկոյն տեսնել Հայկական շարժման արդար հանգամանքն. սակայն շուտով սկսան փոխել իրենց շեշտ և այժմ աւելի հզօրապէս քան յառաջագոյն կը խօսին ի նպաստ Հայկական Դատին։

***

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ալ ջանքեր արաւ ամերիկեան Մամլոյն և հանրութեան բացատրել ցոյցին բուն և լայնագոյն նշանակութիւնն։ Առ այս մի յայտարարութիւն յղեց Հոկտ. 10ին Նիւ Եորքի մեծ թերթերուն— ԹՐԻՊԻՒՆ, ԹԱՅՄԶ, ՍԸՆ և ՈՒԸՐԼՏ— որք յաջորդ օրն, 11ին, հրատարակեցին զայն, և Թրիպիւն ամենապատուական տեսակէն խմբագրական մ'եւս նոյն թուով հրատարակեց Հայոց ի նպաստ։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա մը փօսթի միջոցաւ խմբագրութեան դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն յՈւստր։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն։

Ն. Ե. ԹԱՅՄԶԷՆ

«ԶԱՅՐԱԳՆԵԱԼ ՀԱՅՔ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆ ԻՐԱՑ ԸՆԹԱՑՔԻՆ

Առ խմբագիրն Ն. Ե. ԹԱՅՄԶԻ,

Հայաստան յաւիտեան պիտի պահէ զերախտագէտ յիշատակն այն բանիմաց ուշադրութեան և համակրանաց որով Միացեալ Նահանգաց Մամուլն հետևած է դէպքերու թաւալմանն ի Թուրքիա Սասնոյ կոտորածէն ի վեր։ Այս թաւալման վերջին փուլն է Հայկական ցոյցն ընդդէմ Թուրք կառավարութեան ի Կ. Պոլիս և հետևորդ խառնաշփոթութիւնք։ Իբրեւ հետևանք այդ ցոյցի՝ այժմ Տէրութիւնք և Դուռն եկած են աւելի մերձ երես առ երես և տարբեր հանգամանք ունեցող փաստերու կրնան ընդհուպ դիմել լուծելու համար զՀայկական՝ եթէ ոչ զամբողջ Արեւելեան՝ խնդիրն։

Փափաքելով ցրել ինչ և իցէ թիւրիմացութիւն որ կրնայ գոյացած լինիլ ի միտս ոմանց, կը խնդրեմք դնել հանրութեան առջեւ հետևեալ բացատրութիւնն նկատմամբ ծագմանն ու նշանակութեանն այն ցոյցին զոր Հայեր արին Բ. Դրան դէմ։

Հայոց շարժման ճշմարիտ ոգին «ապստամբութեան» ոգի չէ, որ կը նշանակէ «կարգէ դուրս ելնել», այլ բուռն միտումըն «ի կարգ մանելու։» Նոքա կը խընդրեն կառավարուիլ։

«Հայք լինելով ներկայացուցիչքն քան զամենայն հնուց քաղաքակրթուած քրիստոնեայ ցեղից միոյն, և գոլով աներկբայ մին քան զամենայն խաղաղասէր, մին քան զամենայն աշխատասէր և մին քան զամենայն ուշիմ ցեղից» (Կլատսթոն), պահուած են ի Թուրք կառավարութենէն միշտ ի սարսափի, յաղքատութեան և ի տգիտութեան՝ ի ձեռն հարստահարական միջոցներու դրութեան մի։ Նոր քայլ մ'առնելով՝ կառավարութիւնն ոչ միայն մերժեց պաշտպանել իւր հայ հպատակներն

Բրդաց բարբարոս ցեղերուն դէմ, այլ և այս վերջիններն առաւ պաշտօնական հովանաւորութեան ներքև, զինեց և կազմակերպեց զնոսա արտօնեալ աւազակախմբերու և թող տուաւ Հայոց վերայ։ Վերջինն ու քան զամենայն դիւայինն այս քայլերու եղաւ յետին տարիներս՝ կազմաւորել Պետութեան բոլոր պաշտօնեաներն, քաղաքային և զինուորական, ընդ բարձրագոյն ղեկավարութեամբ, այնպիսի մարմնի մի որ նուիրուեցաւ ի գործ դնել, յանուն նոյն իսկ օրինաց, զՀայս Թուրքիայէն ջնջելու ահաւոր ծրագիրն։ Առաջներն մահմետական կամ թուրք չարավարութիւնն կը խափանէր հայ ցեղին բարեշրջութիւնն, այժմ կը խափանէ զցեղն իսկ։ Ահեղաւահ փոթորիկ մ'է «աւարառութեան, սպանութեան, առևանգութեան, և տանջանաց» որ կ'ընթանայ Հայաստանի վերայէն, որպիսին Հայաստան իւր արկածալից գոյութեան 3,000 տարուան ընթացքին մէջ երբէք չէր կրած։

Գաւառաբնակ Հայք՝ սարսափէն թըմբրած՝ անզօր էին չարժելու, թէև տասն հազար անգամ իրաւացի կը լինէր եթէ դէմ ելնէին այն անգութ ձեռքին որ զիրենք այնպիսի դաժանութեամբ կը վարէր դէպ յանդունդ։ Բաց աստի, նոքա զէնք չունէին, և շատից ուտելու հաց իսկ չըկար։ Նոցա Պոլսեբնակ եղբարց ինկաւ Դըռան դէմ բողոք մի բառնալու սրբազան պարտաւորութիւնն։ Դիտել պէտք ասա թէ իբր 150,000 քաղաքացի Հայերէն զատ կայ նաև աւելի քան 60,000 հայ ժողովրդի երերուն թիւ մի ի Կ. Պոլիս, որք իրենց ընտանիքն ու տունն ունին Հայաստանի մէջ։ Ահա ա'յս Հայերն, ճշմարիտ ներկայացուցիչք հայ գաւառաց, փորձեցին աղերսագիր մի ներկայացունել Մեծ Եպարքոսին։ Նոքա զայդ արին երկար ամիսներ համբերութեամբ սպասելէ յետոյ եւրոպեան միջամտութեան արդիւնքին ի նպաստ իրենց, և երբ մտածեցին թէ բողոքելու ժամ էր, բողոքեցին շատ կանոնաւոր կերպով։ Ոչ մի Եւրոպական ժողովուրդ աւելի լաւ պիտի անէր նոյն պարագայից տակ։ Զայրոյթի յանկարծական պայթում մի չէր, այլ մի նախամտածեալ գործողութիւն։ Հայք վարժուած են իրենք զիրենք զսպելու։ Նոցա համբերատարութիւնն առակային է։ Բայց երբ, ի վերջկոյս Սեպտեմբեր ամսոյ, լսեցին «յոյժ ծանր լուրն թէ տէրութիւնք արդիւնաւոր բարեկարգութիւններ պահանջելու համար ո և է անդրագոյն գործողութենէ նահանջելու աղետալի քայլն առնլու վերայ են», թրքական ահավարութեան իրենց ներկայ երկիւղն յաղթուեցաւ այն և'ս հըզօրագոյն երկիւղէն թէ տէրութեանց վատ նահանջմամբ չղթայազերծ եղած մոլեռանդութեան մի բարձրացող ալիքներն շուտով կուգան ընկլուզանել զհայ ժողովուրդն։

Հայկական ցոյցն լոկ Բ. Դրան դէմ բողոք մի չէր։ Աւելի լայն նշանակութիւն մ'ունէր, որ ընդհանուր ուշադրութենէ վրիպած է։ Այն բողոք մ'է նաև տէրութեանց դէմ։ Լիովին ապացուցուած է, ի միջի այլոց կանոնիկոս Մաք Քոլի գործովն «Անգլիոյ պատասխանատուութիւնն հանդէպ Հայաստանի», թէ Դրան նախամտածեալ որոշումն զՀայս ջնջելու՝ ծագում առած է Եւրոպիոյ պաշտօնական համակրութենէն նկատմամբ Հայաստանի և Պէռլինի դաշնագրին մէջ 61դ յօդուածին ընդունայն մոռցուելէն որով բարեկարգութիւններ կը խոստացուէին Հայոց։ Տէրութիւնք միջամտեցին անգամ մ'եւս Սասնոյ կոտորածին շարժուած, և զԴուռն համոզելու համար յընդունիլ անբաւական ծրագիր մի բարեկարգութեան՝ գործածեցին լոկ դիւանագիտական միջոցներ։ Անցեալ փորձառութիւնն կրկին ու կրկին սովրեցուցած էր Եւրոպիոյ թէ Թուրքն երբէք չի զիջանիր առանց բռնադատուելու։ Բռնական փաստաբանութեան նա երբէք մէկ մասնաչափ քրիստոնեայ երկիր թողած չէ և ոչ մի յօդ օրինաց՝ իւր քրիստոնեայ հպատակաց նըպաստաւոր։

Այս ճշմարտութիւն յարաժամ ներկայ էին ի միտս Հայոց և խորին անձկանօք դէտ կեցած էին դիւանագիտութեան ընթացքին։ Շատ լաւ գիտէին նոքա թէ Թուրքն դիտաւորութիւն չունէր ի նպաստ հայկական բարեկարգութեանց ամենաթեթև զիջում մ'իսկ անելու. միայն կը բաղձային գիտնալ թէ արդեօք Տէրութիւնք լուրջ մտադրութիւն ունէ՞ին Թուրքին խելքն գլուխն բերելու։ Նոքա արդէն տաղտկացած էին Թրքին նողկալի ձգձգողական փորձերէն, և Տէրութեանց ոչ ինչ նուազ նողկալի զաղջութենէն, և երբ Եւրոպիոյ մ'զօրաւոր նահանջման լուրն

առին, բողոքեցին մտադրեալ մասնութեան դէմ։ Նոցա ցոյցին նշանակութիւնն սա էր. Եւրոպա իւր կողմ ունի ե՛ւ զօրութիւն ե՛ւ իրաւունք, և չի պնդեր իւր իրաւանց վերայ. մեզ Հայոցս ոչ է զօրութիւն չկայ, մեք թղթի վերայ բողոք մի կը բառնամք, թէպէտև ջարդումք այսպէս անելու պատճառաւ։

Հայք, եթէ ասատուածային արարչութեան մէջ այնպիսի հրէշ բացառութիւն մի չեն որ չուզեն յարատեւել ի գոյութեան, չէին կրնար չփորձել այդ յուսահատ միջոցն զԵւրոպա ի գութ շարժելու համար։

Այս բացատրութիւններէն յետոյ, հազիւ հարկ կը մնայ յաւելուլ թէ Պոլսոյ այդ հայկական ցոյցն բովանդակ հայ ցեղին ամենատխուր յուսավրիպութեան արտայայտութիւնն էր, և ոչ թէ, որպէս ոմանք կ'ենթադրեն, «Հնչակեանց» մէկ կարգադրութիւնն էր, մի աննշան կուսակցութեան որ Կ. Պոլսոյ մէջ անժողովրդական է և Հայաստանի մէջ գրեթէ անունն լսուած չէ։ Պարտիմք ասել, յօգուտ ճշմարտութեան, թէ Հնչակեանք «անիշխանական» չեն, մեք զայդ հաւատեաւ գիտեմք, թէև նոցա ամկալից և անխոհեմ յեղափոխական կերպերուն չեմք համակրիր։

ԹԱՑՄՔ զօրութիւն մ'է, և այժմ որ ի գագաթնակետն հասած է ճգնաժամն՝ մեր ազգին համար կենօք կամ մահուամբ յղի, ձեզի կոչում կ'անեմք ի խորագոյն խորոց մեր սգաւոր սրտին՝ չարունակել. թէ հնար է աւելի մեծ կորովով այն ազնիւ պայքարն յոր մխուած էք ի յաղթութիւն հայկական դատին, դատ արդարութեան և մարդկութեան։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Մ. Ս. Գաբրիէլեան, ՆԱԽԱԳԱՀ
202 Ուէսթ, 23դ Փողոց, Նիւ Եորք
«Հոկտ. 10, 1895»

Խարբերդէն կը գրեն «Հայրենիքի» թէ Մարտէն մինչև Օգ. 31, ըստ պաշտօնական մարդահամարի, 885 Հայու անցագիր տրուած է, որք յԱմերիկա կը վազեն կ'երթան։ Եթէ այսպէս չարունակուի, կ'ասէ թղթակիցն, Խարբերդ կնաբնակ գաւառի մի չլսուած դժբաղդութեան մէջ պիտի իյնայ։

Ո՞Վ ԵՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԿԱՄՔ

ԴՈՒՍԻՍ, Հայաստանի մերձաւորագոյն դրացին և հին ախոյեանն Դրան քրիստոնեայ հպատակաց, ներկայ հայկական մեծ ճգնաժամուն մէջ շատ նշանաւոր դեր մի չկատարեց, գոնէ մինչև այժմ, որքան որ արտաքուստ կ'երեւի։ Եթէ ծածուկ կերպով ազդեցութիւն ի գործ դրած է յօգուտ մեր դատին, այն գաղտնիք կը մընայ դեռ։ Եթէ կը սպասէ որ ճգնաժամն ի գագաթնակէտ հասնի և ա՛յն ատեն փայլուն կերպով մի գայ մեզ յօգնութիւն, զայդ այ մօտաւոր ապագայն պիտի ցուցնէ։ Դժուար է մեզ հաւատալ որ Զարն այս պատմական մեծ պատեհութիւն փախցուցնէ ռուս անունն փառաւորելու և Հայ ազգին երախտագիտութիւնն յաւիտենապէս գրաւելու։

ՖՐԱՆՍԱ այս ճգնաժամուն մէջ առանց մասնաւոր թշնամութիւն մի ցուցնելու Հայոց, իւր քաղաքականութիւն բընաւ չունեցաւ աւանդական այն բարձր ուղղութիւնն որ իրեն յատուկ էր։ Թէև Անգլիոյ և Ռուսիոյ հետ ի միասին գործեց այս տարի, թէ Սասնոյ կոտորածին նկատմամբ քննութիւն կատարելու և թէ Դրան ծրագիր բարեկարգութեան ներկայացուցնելու, սակայն դէպքերու ընթացքին ի մօտոյ հսկելու փափաքով չարժեցաւ մանաւանդ քան թէ Հայոց նպաստաւոր և արդար լուծում մի փութացուցնելու նպատակաւ։ Անգլիոյ հետ ի միասին կը գործէ, բայց ոչ միացած՝ բառին խորին նշանակութեամբն։

Ֆռանսական ազգն կորուսա՞ծ է արդեօք իւր ծանօթ ասպետական բնազդները, թէ այսպիսի մարդասիրական մեծ խնդրոյ մի մէջ անկախ և իւրուրոյն քաղաքականութեան մի հետևելու անկարող կը գտնէ ինքզինք...։

ԳԵՐՄԱՆԻԱ, ԱՒՍՏՐԻԱ և ԻՏԱԼԻԱ, իբրեւ երրեակ դաշնակցութիւն, ի դէպ չհամարեցան այս խնդրոյ մէջ պաշտօնապէս միանալ Ռուսիոյ և Ֆռանսայի, որոց դէմ են։ Կը հաւատամք այն զրոյցներուն որք կասեն թէ դոքա ոչ պաշտօնական կերպով խրատ տուած են Դրան՝ ընդու-

նիլ երեք տէրութեանց առաջարկութիւնը, բայց «Խենթը խրատն ինչ անէ։» Երբեակ դաշնակցութեան ոեէ մէկ անդամն ջերմ համակրանք չունի Հայոց նկատմամբ։

ԱՆԳԼԻԱ առ այժմ քան զամենայն լուրջ կերպով աշխատողն է Հայա-Թրքական կնճիռներն լուծելու։ Անգլիա աւելի քան միւսներն կը զգայ պատասխանատուութիւն, որովհետև ինքն է եղած Թուրքիոյ հզօր պաշտպանն։ Բարեսիրտ Թագուհին կ'ամաչէ իւր պաշտպանելոյն խժդժութեանց վերայ, և Մեծին Բրիտանիոյ ժողովրդեան լաւագոյն մասն զգացակից է նմին վեհափառութեան։ Թուրքն ալ, որ իւր գոյութիւն պարզապէս Անգլիոյ կը պարտի, բիրտ ապերախտութեամբ կը խոտէ այսօր իւր պաշտպանին խրատն և կը ժպրհի ծաղրել նորա սպառնալիքն։ Թուրքիոյ և Անգլիոյ միջեւ, առթիւ հայկական խնդրոյն, կը տիրէ թշնամական դառն զգացում որպիսի երբէք չէր պատահած։ Սօլզպէրիի յայտարարութիւնն ի Խորհրդարանին թէ Սուլթանին անկախութենն իրական չէ՝ արդէն ահագին հարուած մ'էր որոյ տակ դառնագին հեծեց Համիտ։ Սօլզպէրի չի կրնար այլ ևս նահանջել. յառաջ պիտի երթայ յինչ և իցէ գին խոնարհեցուցնելու Թրքի անմիտ գլուխն։

Վերջին հեռագրեր կը ցուցնեն թէ Թուրքք որքան կատաղած են Անգլիացւոց դէմ։ Այն հեգնական խրատն գոր ոստիկանք կ'ուղղեն ձերբակալուող Հայերու— «Կանչեցէք Ինկիլիզին որ փրկէ զձեզ», կը ցուցնէ կառավարութեան արհամարհական կացքն հանդէպ Անգլիոյ։ Հոկտ. 3ին ձերբակալուած Ֆռանսացի ատամնաբուժին դէպքն ալ նշանակիչ է. ոստիկանք գանակոծեր են զնա, և երբ իմացեր են թէ անգլիացի չէ, ազատ են թողեր զինքն, կասէ հեռագիրն

Վերջապէս Թուրքն մի և նոյն թշնամական զգացման մէջ ընդգրկեր է զՀայն և զԱնգլիացին, և այդ նորոգ կապ մ'է որով տկարն ու հզօրն իրարու կը կապուին, և հայկական դատն կը լծուի անգլիական բռէսդիժի և պատուասիրութեան հետ, ինչպէս արդէն կապուած է անգլիական պատասխանատուութեան։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Սեպտ. 20. 1895

Կը յիշէք անշուշտ թէ մինչև Օգ. 31ին պատասխանել խոստացած էր Դուռն։ Նոյն օրն Սուլթանն 8 աւուր ևս պայմանաժամ ուզեց դեսպաններէն։ Յաջորդ օրն, Սեպտեմբեր 1ին գահակալութեան տարեդարձի առթիւ յուսացեալ Խաթիթ Հիւմայունը չհրատարակուեցաւ։ Պատրիարք Հայրը նոյն օրն պաշտօնական բարեմաղթութիւններ ըրաւ, խորիմաստ աղօթքներով։ Ոեէ խլրտում տեղի չունեցաւ։ Լուսավառութիւնք սովորականէն նուազ էին։ Սեպտ. 2—5 շարունակ աւագանւոյ ժողովներ տեղի ունեցան պալատին մէջ։ Վերջապէս Սեպտ. 6ին Համիտ ծանոյց Անգլիոյ, Ֆռանսայի և Ռուսիոյ դեսպանաց թէ ծրագիրն կ'ընդունի առանց յաւելուածին, այսինքն թէ Կ. Պոլսոյ մէջ հսկող մարմնոյն 3 քրիստոնեայ անդամներն Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆռանսիոյ դեսպանատանց առաջին թարգմաններն պիտի լինին և ոչ թէ ըստ յաւելուածի տրամադրութեանց՝ մասնաւոր անձինք պիտի կարգուին առ այդ՝ տէրութեանց կողմանէ. Վալիներն միշտ Թուրք պիտի լինին, և ոչ թէ բազմահայ գաւառաց մէջ քրիստոնեայ։ Արեւելեան գաւառաց բարեկարգութեան վերայ հսկող գոմիսէոն Սուլթանին կողմէն պիտի կարգուի և ոչ թէ Եւրոպիոյ։

Յաջորդ օրն Պատրիարք Սրբազան ի Թարապիա Անգլիոյ դեսպանին հետ տեսակցութիւն մ'ունեցաւ, և յուսալիր վերադարձաւ։

Ռուսիա և Ֆռանսա Սուլթանին տուած պատասխանէն գոհ ըլլալնին հաղորդած են իրենց դեսպանաց. Լ. Սօլզպէրի դեռ պատասխանած չէ։ Իրաց այս վիճակն աշխատողներու տխրութիւն պատճառեց։ Մեծ շարժման մի լուրեր սկսան տարածուիլ։ Երէկ երեկոյ ի Պատրիարքարան հասած լուրերն յուսալից էին։ Անգլիա դեռ կ'ընդդիմանայ։

Աքեայի բերդէն մի քանիներ վերադարձան. մնացեալ 7 անձանց ազատութիւնն ալ մօտալուտ է։

Հակառակ կառավարական հրամանին՝ Կէսարիկ Փաշայի Հայ-բողոքականաց մատռան չէնքն հետ զհետէ կ'ամբողջանայ։ Վերջերս գիշերայն յաջողեցան հակառակ ոստիկանաց ընդդիմութեան մուշամպայով ծածկել վրան։ ԾՈՎ.

Կ. Պոլիս, Սեպտ. 24

Կառավարութիւնն իմացած է թէ կիրակի Սեպտ. 22ին մի մեծ ցոյց պիտի ը-

նեն Հայեր, և Արդարութեան Նախարարին միջոցաւ շաբաթ երեկոյ մի թուղթ յղած է ի Պատրիարքարան թէ «Հինգ տարի առաջ Գում-Գափուի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած ցոյցին նման ցոյց մը տեղի պիտի ունենայ եղեր վաղն, հաճեցէք առաջքըն առնել, զի հարկ չմնար այլ ևս ցոյցերու, ձեր խնդիր կարգադրուելու վըրայ է։»

Հետեւեալ օրն հանդարտութիւն կը տիրէր։

ԾՈՎ

Կ. Պոլիս Սեպտ. 30, 1895

Այս առտու շուրջ 15 օրիորդներ կը ներկայանան Պատրիարքին և Հայկական խնդրոյն մասին տեղեկութիւն կը խնդրեն։ Մինչդեռ Պատրիարք Հայրն զիրենք հանդարտել կ'աշխատէր, օրիորդներն կեցցէ՛ յեղափոխութիւն կ'աղաղակեն, և դուրսն գտնուող բազմութիւնը կ'ուղղուի դէպ ի Բ. Դուռն։ Հոն զօրքի խումբը ցըրուել կը փորձէ բազմութիւնն, զինուորաց հրամանատարն կրակ ընելու հրաման կուտայ, կը սկսի կռիւ։ Այս տողերս գըրած ատենս ճակատամարտը վերջ գտած չէ։

ԾՈՎ

ԶԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Հայոց Հայրենասիրական դաշնակցութեան Նախագահին հետեւեալ նամակն հըրատարակուեցաւ Նիւ Եորքի Թրիպիւն թերթին Հոկտ. 6ի թուոյն մէջ։

Առ խմբագիրն Թրիպիւնի,

Տէ՛ր. այս առաւօտու թերթերուն մէջ հրատարակուած հեռագրաց մէջ կասկածելի հանգամանք ունեցող հատ մի կայ վերաբերութեամբ Սասնոյ կոտորածին։ «Փալ Մալ Կազէթի պոլսեան թղթակիցն տեսակցութիւն մի կը պատմէ զոր Եւրոպացի պատուիրակաց միոյն հետ ունեցած է որք Սասնոյ խժդժութիւններն քննելու պաշտօն ունէին։ Պատուիրակն կ'ասէ թէ ... սպաննուածներու թիւն աւելի չէ քան 500» ևն. ևն.։

Հանրութիւնն արդէն անցիցն տեղեկացած լինելով Ամերիկացի միսիոնարաց և այլ վստահելի թղթակիցներու շնորհիւ, անդէպ կարեւորութիւն չպիտի ընծայէ այս հակասական տեղեկագրի։ Լաւ կը լինի այս մասին գիտնալ և զայն՝ թէ Քէնիչ Յանձնախմբին Փռանսացի անդամն կասկածի ներքև ինկած լինելով զրկուած է այն պաշտօնէն զոր ունէր Կ. Պոլսոյ դեսպանատան մէջ, և այժմ Թուրք կառավարութեան կողմանէ փարոններու վարչութեան մէջ պաշտօնի կոչուած է լաւ ամսաթոշակով։ Այս կասկածեալ պատուիրակին հետ է, ըստ ամենայն հաւանականութեան, որ Կազէթի թղթակիցն տեսակցած է։

Մ. Ս. Գաբրիէլեան
Նախագահ Հ. Հ. Դաշնակցութեան

Նիւ Եորք, Հոկտ. 5, 1895

ՆՈՐ ՆԻՋԱԿԱԿԻՑ ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Պօսթոն, Սեպտ. 30. Աւետարանական Դաշնակցութիւնն այսօր քուէարկեց հետեւեալ որոշումներն.

Կը խնդրեմք մեր կառավարութենէն միանալ Եւրոպիոյ կառավարութեանց հետ Հայաստանի մէջ մեր քրիստոնեայ եղբարց անգութ խողխողումն բուռն զօրութեամբ դադրեցնելու համար։

Կը խնդրեմք մեր կառավարութենէն Թուրքիոյ ջրերուն մէջ պահել այնպիսի նաւային զօրութիւն մի որ յարգելի անէ Ամերիկայի անունն Միջերկրականում և քրդային լերանց վերայ։

Կը խնդրեմք մեր կառավարութենէն որ բռնօրէն օրինաւոր փոխարինութիւն ստանայ Ամերիկացւոյ այն ամեն գոյքին համար որ վնասուած լինի կամ Թուրք Պաշտօնէից կողմէն գրաւուած։

Կը հայցեմք Եւրոպիոյ Քրիստոնեայ տէրութեանց միջնորդութիւնն սանձակոծել քաղաքակրթեալ աշխարհի այս չարաճճին։

Այս որոշմանց օրինակներն պիտի յղուին Եւրոպիոյ թագակիր գլուխներուն, ինչպէս նաև այս երկրին բարձր պաշտօնէից ոմանց։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՔԻ» 1896

ԹՈՒԱԿԱՆԻՆ

1. Անոնք որ այժմ իրենց բաժնեգին կը վճարեն 1896 թուականին համար, ներկայ 1895 տարւոյ մնացած ամիսներու թիւերն ալ կը ստանան ձրի։

2. Այս մնացած ամիսներու թիւերն ձրի կը յղուին անոնց միայն որք 1896ին ամբողջ տարւոյն համար (ոչ թէ վեց ամսուան) բաժանորդ կը լինին, կանխիկ, այժմէն վճարելով երկու տոլարն։

3. Ապառիկ բաժանորդագրութիւն չընդունուիր։

4. Հեռաւոր երկիրներ բնակող մեր յարգոյ բաժանորդներէն կը խնդրեմք որ այժմէն վերանորոգեն իրենց բաժանորդագրութիւն, որպէս զի 1896ի սկիզբէն անընդհատ չարունակեմք թերթի յղումն, առանց երկմտելու իրենց յօժարութեան կամ հասցէին նոյնութեան վերայ։

ՀԵՌԱԳՐԵՐԸ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԺԽՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կ. Պոլիս, Սեպտ. 30. Հայք իշխանութեանց դէմ ցոյց մ'արին այս քաղաքիս մէջ, և ոստիկանք զարկին գնոսա, սպաննելով և վիրաւորելով զոմանս և ձերբակալելով զբազումս։

Լոնտոն, Հոկտ. 1. Տէյլի Նիւզ վաղն պիտի տպէ Պոլսեան հեռագիր մի՝ որ պիտի տայ հետեւեալ պատմութիւնն երեկուան ժխորման նկատմամբ.

Հայեր ճամբայ ելած էին դէպ ի Սուլթանին պալատին Դուռն երթալու, ուր սովորաբար արդարութիւն կը մատակարարուի, այն նպատակաւ որ Մեծ Եպարքոսին աղերսագիր մի մատուցանեն ընդդէմ կառավարութեան։ Պաշտօնէից իմացուած էր և նոցա հրամանաւ պալատին բոլոր շրջակայքն բռնուած էր ոստիկանօք։ Մինչ ամբոխն կը սպասէր, Ներքին Գործոց Նախարարն հասաւ Դրան մօտ, և ահա շրջակայ փողոցներէն ամբոխն խուժեց դէպ ի նա։ Ոստիկանութիւնն փորձեց ետ մղել ամբոխն, գետին փռելով շատերն և վերջապէս կրակ անելով։ Հեծելազնդի բաժին մի օգնութեան հասաւ ոստիկանաց և հարուածելով ցրուեց ժողովուրդն։ Կռուոյն մէջ սպաննուած կամ վիրաւորուած անձանց մէջ թէ Թրքեր կան և թէ Հայեր։

Ըստ այս հեռագրի՝ ամբոխն յարձակեր է նաև ոստիկանութեան նախարարին բնակարանին վերայ և գնդակ արձակեր է վիրաւորելով զնախարարն։

Կ. Պոլիս, Հոկտ. 2. Պահապան զօրքն զէնքի տակ է։ Ամեն շրջանի մէջ համածաւալ երկիւղ կայ, չգիտնալով թէ դժգոհութիւնն մինչև ուր կամ ուրիշ ո՛ր տեղ ցոյց կրնայ տալ ինքզինք։ Հայ թաղի խանութներն փակուած են, շուկաներն անապատացած։ Զօրքն կը պտըտին փողոցներն։ Ոստիկանք 500 հոգի ձերբակալած են։ Ի պատիւ իշխան Ալպէրթի այս երեկոյ պալատին մէջ տրուելու ճաշկերոյթն յետաձգուած է։

Հայոց մայր եկեղեցին և Գում-Գափու թաղն պաշարուած են զօրօք։ Այս քաղաքի մաքսատունն փակուած է։

Երկուշաբթի, խաչի տօնի օրն (Սեպտ 30), 3000 Հայեր ժողովուած էին Գում-Գափուի մայր եկեղեցին։ Յետ կրօնական պաշտամանց՝ 20 Հայ կիներ Վանեցի, Բաղէշցի և Կարինցի՝ ներկայացուցին Պատրիարքին աղերսագիր մի, նկարագրելով Հայաստանի անհանդուրժելի կացութիւնն և խնդրելով որ Պատրիարքն հրաւիրէ զհաւատացեալներն երթալ խմբովին առ Բ. Դուռն և աղերսագիր մի մատուցանել Մեծ Եպարքոսին Հայաստանի մէջ վաղ ընդ փոյթ բարեկարգութիւններ իրագործելու։ Պատրիարքն ի պատասխանի այս խնդրանաց՝ յորդորեց զուսնկնդիրսն չանել այնպիսի ցոյց մի, այլ իրեն թողուլ որ անէ ամեն ինչ որ կարող է առ այդ նպատակ։

Անհամբեր ժողովուրդն չխաղաղեցաւ և գրգռեալ բացագանչեց, «Հերիք է այսքան տառապանք. որոշած եմք մեք. պէտք է մեռնիլ կամ ազատիլ։»

Հայք դուրս խոյացան տաճարէն և փորձեցին թափոր մի կազմել, մտադրելով այնպէս յառաջանալ դէպ ի Պալատն։ Թուրք ոստիկանութիւնն արդիլեց թափորի կազմութիւնն։

Ուստի և Հայք, փոխադարձ հասկացողութեամբ, յառաջ գնացին զատ զատ խմբակներով կամ անհատօրէն և զանազան ճանապարհօք, և կազմեցին թափորն ու յառաջ գնացին դէպ ի պալատն։

Երբ հասան պալատին դուռն, Սէրվէթ Պէյ, ի գլուխ ոստիկանական խմբի մի, հրամայեց որ ցրուին, և իրեն յանձնեն աղերսագիրն ուղղեալ առ Մեծ Եպարքոսն։ Ամբոխն բողոքեց. յայնժամ Սէրվէթ նախատեց աղերսագիր բերողն «անհաւատ շուն» կոչելով զայն։ Գնդակք արձակուեցան և Սէրվէթ պէկ սպաննուցաւ, և մի քանի հեծեալ ոստիկանք վիրաւորուեցան։ Անմիջապէս ոստիկանք կը բակ արին ամբոխին վերայ։ Հայք կատաղօրէն կռուեցան բայց ծայրագոյն խառնակութեամբ։ Ժխորիչք վերջապէս ցըրուեցան, ոստիկանաց նոր խմբեր օգնութեան հասնելով։

Շատ Հայեր գետին զարկուեցան և խստիւ գանակոծուեցան ոստիկաններէն,

յետ որոյ կապուած լեցուեցան կառքերն ու տարուեցան ի բանտ։

Ժխորմունք չարունակեցին քաղաքին ուրիշ կողմերն ալ օրն ի բուն։

Սոֆթաներու ամբոխ մի, գաւազան ի ձեռին, երկուշաբթի երեկոյ հրապարակ մի խռնուեցան և սպառնացան ջարդել զՀայս։ Ոստիկանք փութով գրուեցին սոֆթայից ամբոխն։

Կ. Պոլիս, Հոկտ. 3. Քալաքն սարսափի մէջ է։ Տագնապալից կացութեան պատճառաւ դեսպանք ժողով արին այսօր Աւստրիոյ դեսպանատունն։ Որոշապէս գիտցուած է թէ առ նուազն հինգ Հայեր, ձերբակալուած լինելէ յետոյ, երկուշաբթի օրն, սպաննուած են։

Երեքշաբթի աւուր ամբոխումն սոֆթայից գործն էր մանաւանդ, որք հալածեցին ու ծեծեցին ամեն Հայ որում հանդիպեցան։ Երեկոյին նշանաւոր Հայու մի տունն կոխեցին և մի քանի հոգի սպաննեցին։ Նաև սրճարանի մի վերայ խուժեցին և քսան Հայ սպաննեցին։ Իշխանութիւնք ջանք չարին Հայերն ազատելու։

Կ. Պոլիս, Հոկտ. 3. Դամասկոսի Ֆռանսական հիւպատոսն յարձակում կրած է խուժանէն և նախատուած ու ցեխոտուած է։ Ֆռանսայի դեսպանն շոյտ արդարութիւն պահանջած է։

Լոնտոն, Հոկտ. 3. «Սթանտարտ» վաղն պիտի հրատարակէ Պոլսեան հեռագիր մի ծանուցանող թէ Հայոց Պատրիարքն նամակաւ մի հրաւիրուած է երթալ Բ. Դուռը երեքշաբթի օրն։ Նամակն պահանջած է թէ իր ժողովրդէն ոչ ոք պէտք է ընկերանայ իրեն։ Պատրիարքն, վասն որոյ, մերժեց զկրաւէրն, և կը մնայ ի պատրիարքարանին, ուր փակուած է մի քանի հարիւր զինեալ Հայերով մէկտեղ։ Պաշտօնեայք այցելեցին Պատրիարքարանն և պահանջեցին որ ներփակեալք անձնատուր լինին, մինչև ժամ 3՝ չորեքշաբթի՝ պայմանաժամ տալով, յետ որ ժամու, եթէ անձնատուր չլինին, շէնքն պիտի առնուէր զինուորական ուժով։ Այս ըսպառնալիք չգործադրուեցաւ։

Սուլթանն երկուշաբթի օրէն ի վեր ունկողին մտած չէ։ Կը զգացուի թէ ճգնաժամ մի հասած է։ Այսպիսի սարսափ տիրած չէր յունական յեղափոխութենէն ի վեր։

Կ. Պոլիս, Հոկտ. 3. Դրան ծառայութեան մէջ գտնուող Հայերն, երբ տեսան ժխորման ծանրութիւնն, փախան քաղաքէն, վախնալով թէ կառավարութիւնն իրենց հետ իբրեւ ընդ մատնիչս պիտի վարուի։ Ամենն ալ այսօր վերադարձան, սակայն, ի բաց առեալ Ցարութիւն Փաշան, Արտաքին Գործոց Նախարարութեան քարտուղար, որ իբրեւ հայ յեղափոխականաց հետ համակիր կ'ամբաստանուի։

Պէրլին, Հոկտ. 3. «Թակէպլէթ»ի Պոլսեան թղթակիցն կը հեռագրէ թէ 1,500 բոլորովին նոր ռիվոլվէր, անգլիական գործարանէ ելած, և միևնոյն տրամագծով, հանդերձ բազում փամփշտօք, գտնուած են բանտարկելոց քով և ի փողոցս ուր ժխորմունք տեղի ունեցան։

Կ. Պոլիս, Հոկտ. 4. Դեսպանատանց քարտուղարք գնացին Արտաքին Գործոց Նախարարին բողոքել ընդդէմ ոստիկանական ծայրայեղութեանց ինչպէս նաև միւսիւլման խուժանին բարբարոսութեանց՝ նկատմամբ ձերբակալեալ կամ վիրաւորեալ Հայերու, որոց ոմանք թոպամահ եղած են և մի քանիք խժդժօրէն անդամատուած։

Բերայի Հայոց եկեղեցւոյն մէջ 500 ապաստանեալք կան դեռ։ Կալաթայի Հայոց Կեդրոնական Վարժարանն փակուած է, որովհետև սոֆթաներն սպառնացած են յարձակիլ անոր վերայ։

40 Հայերէ բաղկացած պատգամաւորութիւն մի անգլիական դեսպանատուն այցելեց՝ Սըր Փիլիպ Քըրիի կոչում անելու, և պատասխան տանալով թէ դեսպանն ի Թրապիա է, մտադրութիւն յայտնեց հոն երթալ զինքն տեսնել։

Վստահելի աղբիւրէ տեղեկութիւն կայ թէ աւելի քան 1,000 Հայեր բանտ լեցուած են՝ ժխորման մասնակցած լինելու ամբաստանութեամբ։ Թուրքերն ռիվոլվէր կը գտնեն և փամփուշտ։ Երեքշաբթի աւուր ամբոխմանց առթիւ մահմետական խուժանն պատեհութենէն օգուտ քաղեց շատ մի Հայոց խանութներն ու գրասենեակներն կողոպտելու։

Լոնտոն, Հոկտ. 5. Պատասխանատու թղթակիցներու այն տեղեկագրութիւնն թէ Սասնոյ և այլ տեղեաց խժդժութեանց պատմութիւնք մեծապէս չափազանցուած են քաղաքական նպատակօք, կ'աւելցունէ հայկական խնդրոյ մասին անվստահութիւն։ Միւս կողմանէ՝ պահպանողական կուսակցութիւնն աւելի հզօրապէս ազդեցութիւն կը գործածէ Լորտ Սոլզպէրիի վերայ՝ չափաւորել իւր պահանջներ Դրան հանդէպ։ Ազգատական նախարարութեան անկումէն ի վեր յայտնուած է թէ Լ. Բոզպէրի սպառնացած էր Դրան որ եթէ տէրութեանց պահանջներուն գոհացում չտրուէր մինչև այս ինչ ատեն, թրքական նաւահանգիստներէն երկուքն, հաւանօրէն Զմիւռնիոյ և Թեսաղոնիկէի, պիտի գրաւուէին և մաքսի տուրքն պիտի վար դըրուէր։ Նախարարապետ Սոլզպէրի ի սկզբանէ անտի չարունակեց իւր նախորդին քաղաքականութիւնն։ Բրիտանական նաւատորմիղին ներկայութիւնն ի Լեմնոս կը բացատրուի իբրեւ ապացոյց Անգլիոյ դիտաւորութեան՝ գրաւել թրքական նաւահանգիստներ եթէ Դուռն դիմադրէր կամ չափազանց յապաղէր խնդիրն կարգադրելու։ Սակայն Բեամիլ Փաշայի Մեծ Եպարքոսութեան վերակոչումն, ուրիշ ընդաններու հետ թէ Սուլթանն կ'ուզէ գոհացում տալ Տէրութեանց, ետ բռնած է Անգլիոյ ձեռքն։ Պահպանողական հետեւողներէ շատերուն կողմանէ խնդիր մատուցուած է Լ. Սոլզպէրիի հետևիլ զԹուրքիա պաշտպանելու աւանդական քաղաքականութեան։ Հաւանական է որ Լորտն մեղմացունէ իւր պահանջներու խստութիւնն։

Կ. Պոլիս, Հոկտ. 6. Սըր Ֆ. Բըրի, շաբաթ օրն այցելեց զԲեամիլ Փաշա և զօրաւոր կերպով պնդեց թէ բացարձակապէս հարկ էոր Դուռն Մայիս 11ի ծրագիրը ընդունի և անմիջապէս հրատարակէ կայսրութեան ամեն կողմն թէ Կառավարութիւնն ընդունած է զծրագիրն։ Նաև ծանոյց Մեծ Եպարքոսին թէ Նախարարապետ Սոլզպէրի ամենաթեթեւ դիտում անգամ չունի իւր պահանջներն մեղմելու՝ սկզբանց մասին, ինչ և լինին այն եղանակաւորութիւններն որոց կարենայ հաւանիլ բարեկարգութեան ծրագրին մէջ՝ որպէս ներկայացուած է այն։ Շաբթուան դէպքերն, ասաւ Սըր Ֆ. Բըրի, ցուցած էին անհանդուրժելի հետևանքն յապաղման մի որ այլ ևս չէր կրնար թոյլատրուիլ։

Մինչ դեսպանն այց ելած էր Մեծ Եպարքոսին, Բրիտանական դեսպանատան քարտուղարն, ըստ հրահանգաց Սըր Ֆ. Բըրիի, այցելութեան գնաց ի Պատրիարքարանն կարեկցութիւն յայտնելու Հայոց և բացատրել Տէրութեանց գործողութիւնը։

Բրիտանական դեսպանն թոյլտուութիւն խնդրած է Դռնէն որ զիւր քարտուղար յղէ այցելել այն բանտերն ուր Հայք լեցուած են։ Բերայի կազի գործին մէջ աշխատող միսիւլման բանուորներն իրենց հայ գործընկերներուն 21ն սպաննած են Հոկտ. 3ի գիշերն։ Այս լուր խորին զայրոյթ պատճառեր է օտարականաց մէջ։

Այսօր 100 կին և տղայք ապաստանեցան ի պարտէզն Բրիտանական դեսպանատան։

Հայոց Պատրիարքն գրած է Տէրութեանց ներկայացուցիչներուն և ծանուցած է թէ իբրեւ սոֆթա ծպտեալ մարդիկ սկսած են յարձակումն Հայոց վերայ։ Անյայտ եղած 400 Հայերու ցանկ մի յղած է։

Կ. Պոլիս, Հոկտ. 6, Սոֆիայի ճամբով, Հոկտ. 7. Տէրութեանց ներկայացուցիչք հաւաքական ծանուցագիր մ'են յղեր Դրան և ուշադրութիւն հրաւիրած են այն անբաւական միջոցներուն զորս ոստիկանութիւնն ձեռք առած է Պոլսոյ և արուարձանաց մէջ հանրային անդորրութիւնը պահպանելու համար։ Կը պահանջեն խիստ քննութիւն ժխորմանց և արիւնահեղութեանց և Հայոց մեծաքանակ բանտարկութեան աստ, և բանտարկելոց արձակումն ու ձերբակալութեանց դադարումն։

Պատրիարքարանի մայր եկեղեցւոյն մէջ երկուշաբթիէն ի վեր ապաստանեալ Հայերն այս կէս օրին մի քանի գնդակ արձակեցին, և վախցուեցաւ թէ նոր պայթում մի վերահաս էր։ Շէնքին հսկող ոստիկանք իսկոյն լուր տուին զինուորական իշխանութեանց, և զօրաց մեծ բազմութիւն հասաւ ի վայրն։ Այս պատճառ եղաւ թաղին ժողովրդոյ ահաբեկութեանը, որք փախան ամեն ուղղութեամբ։

Ոստիկանաց գործին մէկ մասնաւորութիւնն շատ ուշադրութիւն գրաւած է։ Երբ ժանտարմաներն ձերբակալեր են զՀայերն, կրկին և կրկին ասեր են նոցա «Կանչեցէք Անգլիոյ որ ազատէ զձեզ»։

Ստամպոլի շատ թաղերուն մէջ թղթեր փակցուած են որով զիրաժամուժն կը գրգռեն ընդդէմ «անհաւատից։» Ոստիկանք կը պատռեն այդ թղթեր, բայց շատ մի կարդացուած լինելէ յետոյ։

Մ. Տէրինեի, Ֆռանսացի ատամնաբոյժ մի, Հոկտ. 3ին ձերբակալուած էր և ծեծուած յոստիկանութենէն։ Ցայտարարելուն վերայ թէ ինքն անգլիացի չէր, արձակուած էր։

Ըստ «Թակէպլաթի» Սըր Ֆ. Բըրի, իւր վերջին տեսակցութեան ատեն ընդ Մեծ Եպարքոսին, պնդած է թէ ծրագրին որդեգրման մասին որոշ պատասխան կ'ուզէ մինչև հինգշաբթի օրն։ Եթէ այնպիսի պատասխան մի չարուէր, բրիտանական նաւատորմիղ մի երկաթ պիտի նետէր Կ. Պոլսոյ առջև և Պոսփորի մէջ պիտի մնար մինչև որ խնդիրն կարգադրուէր։

Կ. Պոլիս, Հոկտ. 8. Կը տեղեկագրեն թէ ծանր խռովութիւնք ընդ մէջ Հայոց և Տաճկաց բռնկեր են ի Սեբաստիա, Վան և Բաղէշ, Հայաստանի գլխաւոր քաղաքաց երեքն։

Այլ և այլ տէրութեանց պահապան նաւերն ի Կալաթա երկաթ ձգած են որպէս զի ի հարկին պաշտպանել կարենան օտար բնակիչներն։

Նախարարաց խորհուրդ մի տեղի ունեցած է յարգունիս նկատողութեան առնլու թէ ինչպէս պէտք է պատասխանել վեց տէրութեանց ներկայացուցիչներուն հաւաքական ծանուցագրին։

Ծանր խռովութիւնք այլ ևս տեղի չունեցան ատ։ Իստամպոլի և Կալաթայի հայ խանութք գոց են։ Երէկ երեկոյ հետի և հեծեալ զօրաց վերայ նոր յաւելում եղաւ փողոցներն հսկելու։

Սուլթանն երկու անգամ զՅարութիւն Փաշա առաքեր է ի Պատրիարքարան գործակցելու Պատրիարքին հետ ի համոզել այն Հայերն որ եկեղեցեաց մէջ ապաստանած են՝ վերադառնալ իրենց տներն։ Այս ուղղութեամբ կատարուած ջանքերն անօգուտ եղած են, սակայն, Հայք յայտարարելով թէ իրենք թուրք կառավարութեան պաշտպանութեան խոստումներուն չեն կրնար վստահիլ։ Ընդ ամենն 95 դիակունք յանձնուած են Պատրիարքարանի պաշտօնէից՝ հրամանաւ Սուլթանին, և կը պնդեն թէ այդքան Հայ մի այն սպաննուած են նորադէպ ժիսորմանց ատեն։

Ֆուատ Փաշա ի Տարտանէլ գնացեր է ամրութիւնքն քննելու, և թորփէտոներ յղուած են դէպ ի նեղուցներն։

Կ. Պոլիս, Հոկտ. 8. Հոկտ. 5ին կառավարութիւնն հրամայած է ոստիկանութեան նախարարին եկեղեցիներէն արտաքսել ապաստանեալ Հայերն. սակայն այս պաշտօնեայն չուզեց, այնպիսի գործողութեան մի հետևանքներէն երկնչելով։

Պատրիարքն, անդուլ ջանից մէջ, ուժասպառ եղած անկողին ինկած է։ Քանի օրէ ի վեր քնացած չունի։

Լոնտոն Հոկտ. 9. Քրոնիքլի կը հեռագրեն թէ Դուռն այս ձմեռ կամ գարունն ծանր դէպքերու ակնկալութեամբ կը շարժի։ Զօրք կը ժողովին Պուլկարական սահմանագլուխն, և բազում զօրութիւն Ասիական Թուրքիայէն կը փոխադրուին յԵւրոպա։

Տրապիզոն, Հայաստան, Հոկտ. 4. Երէկ ընդ մէջ Թրքաց և Հայոց ծանր ընդհարմունք պատահոցան հոս։ Շատ Հայեր ըսպաննուեցան։

Կ. Պոլիս, Հոկտ. 9. Վեց տէրութեանց դեսպանք այսօր տակաւին Դրան պատասխանին կը սպասեն։ Եւրոպական կառավարութեանց համբերութիւնն արագօրէն կը սպառի, և իրենց կողմանէ որոշ գործողութիւն մի կրնայ շուտով ակնկալուիլ եթէ գոհացուցիչ պատասխան չգայ։ Տէրութիւնք այժմ կատարելապէս համաձայն կ'երեւին այս խնդրոյն մէջ, և հոս անհաւանական չի նկատուիր որ Մեծն Բրիտանիա նախաձեռն լինի զօրութեանց ցոյց մ'անելու։ Սուլթանն կրկին և կրկին ադաչեր է որ բրիտանական նաւատորմն Լեմնոսէն հեռանայ, բայց մարտանաւերն հոն կը մնան Տարտանէլի մօտիկ։

Թէև նորադէպ կոտորածին պարագլուխներէն ոչ սակաւք ծանօթ են թէ՝

դեսպանաց և թէ կառավարութեան, այդ ոճրագործք ամեն օր փողոցաց մէջ կը տեսնուին, վստահ թէ իրենց համար ձերբակալման վտանգ չկայ։ Լաւ ծանօթ է նաև թէ այս ինչ տաճիկ հանրային պաշտօնեաներ կերակուր հայթայթած են սոֆթաներուն որք ամենէն աւելի գործունէութիւն ցուցին վերջին ծայրայեղութեանց մէջ։ Այս պարագայից մէջ զարմանալի չէ որ թուրք կառավարութեան խոստմանց ոչ ոք կը հաւատայ։ Բաց աստի, Դուռն պատասխանած չէ Սըր Ֆ. Բըրիի խնդրանաց որ թոյլ տրուի իրեն բանտերն այցելել։

Թուրքք հայ եկեղեցականաց միայն թոյլ կուտան մտնել յեկեղեցիներն ուր Հայք ապաստանեալ կը մնան, և երբ չէնքէն դուրս ելնեն, խնամով կը խուզարկուին։

Համաձայն դեսպանաց պահանջմանն՝ ոստիկանութիւնն սկսած է արձակել այն Հայերն որք ժիսորին առթիւ բանտերն լեցուած էին։ Արձակուածներէն երկուքն եղկելի վիճակի մէջ էին, երկուքն ալ տառապելով եօթն կամ ութ վէրքերէ։ Սոքա պատմած են, և պատմութիւնն հաղորդուած է դեսպանաց, թէ բանտարկեալք ոչ կերակուր և ոչ բժշկական խնամք ընդունած են արձակմանէն առաջ՝ երեք օրէ ի վեր։

Կ'ասեն թէ Տարտանելի նեղուցին մէջ կը զետեղուին թորփէտոներն, և ռազմաթերք կը յղուին ամրութեանց։ Տաճիկք ըստ երեւոյթին կը պատրաստուին պաշտպանել Տարտանէլի նեղուցն եթէ նաւային ցոյց մի անելու փորձ լինի այս ջրերուն մէջ։

Լոնտոն, Հոկտ. 9. Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ քրիստոնէից կոտորածներ տեղի ունեցած են ի Ռոտոսթոյ, ի Սիլիվրի, և յիզմիտ։ Երեկուան Տրապիզոնի կոտորածին ատեն Տաճիկներն զինեալ են եղեր, և հոն գտնուող զինուորական գունդերն ամենեւին չեն աշխատեր ջարդն արգիլելու, և կ'ասուի իսկ թէ խոշխոշելու և աւարառութեան գործին մասնակցած են։

Այն եկեղեցիներն ի Կ. Պոլիս ուր Հայեր ապաստանեալ են, երէկ պաշարման վիճակի մէջ դրուեցան։ Ոստիկանք այլևս թոյլ չեն տար որ ուտելիք և ջուր ներս տարուին, յուսալով այսու ստիպել զապաստանեալներն դուրս գալու։

«Սթանտարտ» Հոկտ. 8 թուականաւ հեռագիր մի պիտի հրատարակէ վաղնջուէ պիտի տեսնուի թէ փաստերն կը դիզուին ցուցնելու որ պաշտօնէից զեկավարութեան տակ սոֆթայք և Քուրդք գործեցին անցեալ շաբթու։ Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Սուլթանն հրամայեր է մի քանի հարիւր ոչխար և շատ մի անուշեղէն բաշխել սոֆթաներուն իբրեւ վարձատրութիւն իրենց հաւատարմութեան։

Հեռագիրն կը յաւելու թէ Ռուսիա հաւաստած է զԴուռն թէ ինքն տէրութեանց հետ թէև միացաւ նոցա պահանջմանց մասին, մտադիր չէ ծայրայեղ միջոցներ ձեռք առնելու։

Պէռլին, Հոկտ. 9. Կ. Պոլսէն հեռագիր մի կ'ասէ թէ Հայկական Խնդիրն կամաց կամաց Մեծին Բրիտանիոյ և Ռուսիոյ միջեւ պայքարի մի չուկէտն կը լինի Պոսֆորի մէջ գերակշիռ ազդեցութեան համար։ Անկարելի չէ որ Սախա Փաշա վերակոչուի իւր նախկին պաշտօնին իբր Մեծ Եպարքոս։ Ռուս դիւանագիտութիւնն այժմ լոկ այդ բանին կ'աշխատի— զՔամիլ Փաշա պաշտօնանկ անելու, առ այդ նպատակ մինչև անգամ պիտի թեր կանգնի Թուրքիոյ ընդդէմ Անգլիոյ։

Կ. Պոլիս, Հոկտ. 9. Այսօր ուշ ատեն իմացուեցաւ թէ Դուռն վերջապէս պատասխանած էր վեց Տէրութեանց հաւաքական ծանուցագրին։ Այս պատասխան, սակայն, գոհացուցիչ չէ վեց դեսպանացն։ Դուռն իւր պատասխանագրոյն մէջ կը թուէ այն միջոցներն որք ձեռք առնուած են կարգ պահպանելու համար, և կը յայտարարէ թէ նորադէպ ժխորման մէջ մահմետականք չէին յարձակողներն, այլ թէ Հայք սպաններ են անմեղ միւսիւլմաններ։

Տեսնելով Դրան պատասխանին անգոհարար հանգամանքն՝ վեց դեսպանքն ժողովեցան այսօր նկատելու համար զխնդիրն։

5,000 Մաուսէրեան հրացան, թուրք կառավարութենէն ապսպրուած, հաւան հոս քանի մ'օր առաջ, սակայն զէնքն դեռ

յանձնուած չեն քանզի կառավարութիւնն չէ կրցած սակաւին վճարել զդինն։

Կ. Պոլիս, Հոկտ. 10. Ոստիկանութիւնն կ'ասէ թէ 100 միւսիւլման ձերբակալուած են ժիսրման մասնակցած լինելու յանցանօք։

Այս երեկոյ, ներկայութեամբ և օգնութեամբ դեսպանաց քարտուղարներուն՝ պարպուեցան հայ եկեղեցիներն։

Օսմանեան Ազատական Ցանձնախումբը, որոյ գործին ի Լոնտոն կը հրատարակուի, վերջերս քաղաքիս պատերն փակցուց յայտարարութիւն մի թէ Հայերու դանդատք արդարացի են, թէ նոքա ևս մահմետականներու պէս կը հարստահարուին։ Իզզէթ Էֆէնտի, նշանաւոր փաստաբան, և այլ ոմանք ձերբակալուեցան այդ յայտարարութեան հեղինակներն լինելու կասկածով։ Կ'ասուի թէ Իզզէթ ընդունած է թէ թղթին հեղինակն ինքն էր։ Եըլտըզի բանտին մէջ փակուած է նա այժմ։

Կ. Պոլիս, Հոկտ. 10 Լաւատեղեակ աղբիւրէ տեղեկացուած է թէ վերջին ժիսրմանց ատեն այս քաղաքին մէջ սպաննուած, վիրաւորուած և աներեւոյթ եղած Հայերուն բոլորական թիւն աւելի քան 700 է։

Հայ եպիսկոպոս մի և դեսպաններու քարտուղարներն յորդորեցին յեկեղեցին Գում Գափուի ապաստանողներն ելնել դուրս, վստահեցունելով զանոնք թէ ապահով պիտի մնային։ Վարանելէ և խորհրդակցելէ յետոյ՝ ապաստանեալք յայտնեցին թէ չպիտի թողուին եկեղեցին բայց եթէ հետեւեալ պայմաններով. որ ներում շնորհուի քաղաքական յանցաւորաց, որ զէնքերն իրենցմէ չառնուին, որ բանտերն բացուին տէրութիւններու դեսպաններուն առջեւ, և որ անմեղ բանտարկեալք արձակուին։ Քարտուղարք մերժեցին նկատել զայս առաջարկութիւն։ Մինչ այս մինչ այն՝ կանայք և մանուկներ դուրս ելած էին, բայց երբ տեսան թէ այր մարդիկ չէին գար, լալով և աղաղակելով ետ դարձան, ասելով թէ կը վախնային, և թէ կուզէին յաւէտ մեռնիլ եկեղեցւոյն մէջ։

Քարտուղարք, ի տես հայերու այս յամառութեան, խորհրդակցեցան Պատրիարքին հետ, յետ որոյ, շնորհիւ այս առաջնորդին մեծ ազդեցութեանն իւրայնոց վերայ, Գում Գափուի եկեղեցին պարպուիլ սկսաւ։ Քահանայք դուրս ելնողներուն ցուցակն չինեցին, և գավառներն խուզարկելով զանոնք գտնուած զէնքերն վարդրին պատրիարքարանին մէջ։ Ապա միւս եկեղեցիք պարպուեցան. ոստիկանք չխառնուեցան գործի։

Լոնտոն, Հոկտ. 11. Սթանտարտին կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ անդորրութիւնն հեռի է վերահաստատուելէ. Թուրք տարրն ալ կ'եռայ, և այս մեծ մտահոգութիւն կը պատճառէ պալատին։ Մզկիթներուն և այլ հանրային շէնքերու վերայ թղթեր փակցուած են որք սահմանադրութիւն և ազգային ժողով կը պահանջեն։ Թուրք երիտասարդութիւնն առթէն օգուտ կը քաղէ թշնամութիւն գրգռելու Սուլթանին դէմ, զոր պատասխանատու կը հռչակէ այս ամեն չարիքներու։ Պալատին գլխաւոր երկիւղն Հայերէն չէ այլ Թրքերու յեղափոխական ոգւոյ այս ցոյցերէն։ Այս երկիւղն անվրէպ պիտի բերէ հայկական բարեկարգութիւնն, որ թերեւս հրատարակուի չաբաթն չելած։

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ
ՍԱՄՈՆ ՍՈՎԵԼՈՑ ՀԱՄԱՐ

Ամերիկայի այլև այլ կողմերն ցրուած մեր հայրենակիցներ, եթէ իրենց համար դիւրութիւն կը համարին կրնան ՀԱՅԲԻ յղել իրենց նպաստն Սասնոյ սովելոց համար։ Մեք ՀԱՅԲԻ մէջ կը հրատարակեմք այդ նուիրատուութիւններն և զգումարն կը հասցունեմք Նիւ Եորքի ամերիկեան կամ Լոնտոնի անգլիական Ցանձնախմբոց որք կազմուած են մի և նոյն նպատակաւ։

Հետեւեալ գումարներն մեզ հասած են ցարդ.

Տիկին Ա. Կլօվըր (Ամերիկացի)	10տոլար
Քօնքօրտի Հայերէն	12տ. 13ս
Տիար Բ. Շէքէրճեանէ	10 ,,

Էտինպուրկէն մի նամակ ուղղուած է ՄՇԱԿի՝ Պոյաճեան ստորագրութեամբ, որ կը ծանուցանէ թէ «Իրենցմէ (Սասունցւոց) մին, Տալլորիկցի Վարդանն գնաց Ամերիկա, ուր կը յուսայ, պերճախօս և

քաջ անգլիագէտ Պ. Հրանդ Մ. Քիրէչճեանի աջակցութեամբն, Ամերիկեան յանձնախումբ մը կազմել և Սասնոյ տուժեալներուն օգնութիւն հասցունել :»

Մեր ընթերցողաց շատից ծանօթ է թերևս թէ Պօյաճեան անուն այս թղթակիցն ոչ այլ ոք է բայց եթէ Նիւ Եորքցւոց լաւ ծանօթ Տօքթոր Նեւտոն Մեսրոպ Պօյաճեանն, որ այժմ ուրիշ անուն մ'ալ ունի, այսինքն Պարոն Բագրատ Մ. Ասլան :

ՄՇԱԿի մէջ հրատարակուած նամակին վերյիշեալ տողերէն կ'իմանամք այն խորին պատճառն որով անյաջող եղան ջանք Նիւ Եորքցի տասն կամ տասներկու երևելի Հայերու, որք ի ժողով գումարուելով ուզեցին միջոցներ կարգադրել որպէս զի Տալւորիկցի Պրն. Վարդան Հայոց դատին պաշտպաներ և Սասնոյ սովելոց նպաստաւոր կերպով գործէ այս օտար երկրի մէջ : Պօյաճեանի Օգ. 19ի նամակէն կը տեսնուի թէ Լոնտոնէն ճանապարհ ելնելէն առաջ կարգադրուած է եղեր որ Պրն. Վարդան «պերճախօս և քաջ անգլիագէտ Քիրէչճեանի աջակցութեամբն» գործէ աստ :

Այդ կարգադրութեան դէմ խօսիլ չեմք ուզեր, միայն կը ցաւիմք որ անոնք որ յառաջագոյն այդ կարգադրութիւն արած էին, տղայաբար գաղտնի պահեցին, ուրացան, որով 10—12 հոգիք երկու կամ երեք երեկոյ վատնեցին Պ. Վարդանին գործունէութիւնն օգտակար ուղղութեան առաջնորդելու փափաքով :

Միթէ հայրենասիրութիւնն շահավաճառութի՞ւն է, Պարո՛ններ :

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՒ 1.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Այս հրատարակութիւն անգլիերէն լեզուաւ տետր մ'է, 48 երեսէ բաղկացած, որ կը պարունակէ (1) մի Նախաբան, (2) կտորածին և Սասնոյ նկարագիրն Տալւորիկցի վկայի մի շրթունքէն. (3) Կլատսթոնի վերջին առենախօսութիւնն զՀայաստանէ. (4) Տիլօնի մեծ յօդուածն, որ արտատպեալ է Քօնթէմփորէրի Րիվիւի հրատարակչաց յատուկ թոյլտուութեամբ :

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի : Պէտք է կա՛մ Րէճիսթըր անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն :

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար հասցէն է "խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա. ԱՐՁԱԳԱՆՔԻ և այ պայմանն ու հասցէն նոյն է.

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ. Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար.

ԲԱԶՄԱՎԷՊԻ հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի հասցէն է,
Redaction du HANTES,
Conven Mechitariste,
VIENNE, AUTRICHE

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՅ բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ. հասցէն է—
33 De vere Gardens W,LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար.
Հասցէն է. Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ : Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տոլար: «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լաւագոյն լրագիրն է :
Հասցէն է —
Journal Le HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»

Հանդէս կիսամսեայ
25րդ տարի

Տարեկան բաժնեգինն է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40 սէնթ : Հասցէն է —
M. M. MAMOURIAN,
Smyrne, TURQUIE

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոեւէ կողմ երթալ ուզողներուն: Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու: Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին: Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է: Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք: Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով:

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն: Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք: Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է: Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոեւէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին:

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին:

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & Co.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ: Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4: Շաբաթ օրերն 9էն մինչև 1:

Հասցէն է 314 Մէյն փողոց:

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԷԹ ՀԱՈՒԶ

անունն է Ուստըրի Ֆրօնթ փողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, շապիկ, օձիկ, փողկապ, ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է աս, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՇԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս Փրանք կամ 1 րուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետեւապէս հարցն այն չէ թէ կարօ՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք. Ոչ թէ բան մ'անելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերըն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to MUNN & CO., who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A Handbook of Information concerning Patents and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the Scientific American, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ